ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2025թ. թիվ 45-Ա

Հ.ՋԱՐԳԱՐՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հունվարի 14-ի թիվ 20-Ա և 2025 թվականի հունվարի 22-ի թիվ 37-Ա որոշումները, հաշվի առնելով Հ.Ջարգարյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

«ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հերմինե Գրիգորի Ջարգարյանին 2025 թվականի հունվարի 27-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտակա-նությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունվարի 27
ք.Վանաձոր